ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԵՌԱՀԱՍ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025

Մարտի 22-ին Հայաստանում կանանց հիմնադրամի կողմից կազմակերպվել էր հանդիպում դեռահաս աղջիկների հետ, որոնք տարբեր ծրագրեր են իրականացնում Հայաստանի տարբեր հատվածներում: Հանդիպման նպատակն էր գնահատել դեռահասների կողմից Հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացված նախագծերը: Սա Հիմնադրամի՝ դեռահաս աղջիկների հետ համագործակցության ևս մեկ տարի է, և այն շարունակում է ապացուցել իր արդյունավետությունն ու արդիականությունը՝ առկա կարիքներին ի պատասխան: Ֆինանսավորման շրջանակներում իրականացված նախաձեռնությունները բազմազան էին՝ կրթությունից մինչև արվեստ, մարմնի դրական վերաբերմունք և կանանց իրավունքներ: Հանդիպմանը ներկա էր ընդհանուր առմամբ 7 խումբ:

Ծրագրերն իրականացնելու և թեման ընտրելու շարժառիթները

Մասնակից դեռահասները ցուցաբերեցին ուժեղ և անձնական նվիրվածություն այն խնդիրներին, որոնք նրանք ընտրել էին լուծել իրենց նախագծերի միջոցով: Նրանց դրդապատճառները հիմնված էին ոչ միայն կյանքի փորձի, այլև իրենց հասակակիցների և համայնքների նկատմամբ խորը պատասխանատվության զգացման վրա: Չնայած թեմաները տարբեր էին խմբերում, նրանց միավորողը

ցանկությունն էր արձագանքելու իրական խնդիրներին, որոնք հաճախ աննկատ են մնում կամ չեն բարձրաձայնվում դեռահասների շրջանում: Անկախ նրանից, թե ոգեշնչված էին անձնական պայքարով, հասարակական անարդարությամբ, թե կրթության և իրազեկության բացերով՝ յուրաքանչյուր նախագիծ ծագել էր փոփոխություններ խթանելու մտածված և անհապաղ անհրաժեշտությունից:

Շատ դեպքերում նախագծերը ծառայում էին որպես ջատագովության, ամոքման և հզորացման մի ձև՝ թե՛ իրականացնողների, թե՛ իրենց թիրախային լսարանի համար: Քննարկումները ցույց տվեցին, որ այս աղջիկները ոչ միայն արձագանքում էին իրենց միջավայրերին, այլև ակտիվորեն ձևավորում էին նոր պատմություններ երիտասարդական առաջնորդության, հավասարության և սոցիալական ներառման շուրջ: Այսպիսով, նրանց նախագծերի թեմաների ընտրությունը պայմանավորված էր բազմաթիվ հատվող գործոններով, ներառյալ անձնական անհանգստությունները, համայնքի կարիքները, մասնագիտական ձգտումները և իրենց սերնդի համար արդարության և բարեկեցության ավելի լայն տեսլականը:

Անձնական համապատասխանություն

Շատ աղջիկներ ընտրել են թեմաներ, որոնց իրենք կամ իրենց հասակակիցները անձամբ բախվել են, ինչպիսիք են մարմնի կերպարի հետ կապված խնդիրները, սննդային խանգարումները, բուլինգը և գենդերային խտրականությունը: Օրինակ՝ «Հայելի» նախագծի թիմը շեշտել է, որ «սննդային խանգարումներ ունեցող մարդկանց 90%-ը դեռահաս աղջիկներ են», և որ Հայաստանում «տեղական տվյալները սակավ են, բայց նույնիսկ միջազգային տվյալները ցույց են տալիս, որ դեպքերի 70%-ը պատկանում է իրենց տարիքային խմբին»: Մարմնի դրական ընկալման և հոգեկան առողջության վերաբերյալ նախագծեր իրականացնող աղջիկները նշել են. «Մենք տեսանք, որ մեր տարիքի աղջիկներին հաճախ սխալ են հասկանում, ավելի զգացմունքային են և կարող են հեշտությամբ կորցնել իրենց ապագայի հանդեպ հույսը», ինչը նրանց մղում է աշխատել ինքնագնահատականի և հոգեկան բարեկեցության վրա:

Տեղեկացվածության և կրթության բացեր

Նախագծերը նպատակ ունեին լրացնելու իրենց համայնքներում առկա գիտելիքների բացերը, մասնավորապես՝ տաբու կամ անտեսված թեմաների շուրջ: Օրինակներ են դաշտանային առողջությունը, հավասարությունը և հոգեկան առողջությունը:

Նախաձեռնության առաջնորդ աղջիկները նշել են, որ իրենց հասակակիցների շրջանում իրազեկվածության մակարդակը համեմատաբար ցածր է, և դա բարձրաձայնվել է նաև հենցի իրենց հանդիպումների մասնակիցների կողմից: Նրանք նկատել են, որ «դեռահասների մեծ մասը պատկերացում անգամ չուներ, որ կարող են բացահայտ խոսել իրենց խնդիրների մասին, այլ ոչ թե դրանք թաքցնել՝ ռիսկի դիմելով հոգեբանական և նույնիսկ ֆիզիկական առողջության հետ կապված խնդիրներ ունենալու»: Տեղեկատվական և կրթական հանդիպումներին մասնակցած շատ դեռահասներ հայտնել են, որ սովորել են այնպիսի բաներ, որոնց մասին տեղյակ չեն եղել և երբեք չէին կարող դիտարկել նման տեսանկյունից:

Հասակակիցներին հզորացնելու ցանկություն

Մասնակիցներն ունեին պատասխանատվության բարձր զգացում՝ աջակցելու իրենց տարիքի մարդկանց՝ կրթության, հասակակիցների աջակցության և իրազեկվածության բարձրացման միջոցով: «Մեր հասակակիցներն ավելի լավ են լսում, երբ տեղեկատվությունը գալիս է իրենց տարեկիցներից, քան մեծահասակներից», - ասաց «Հայելի» նախագծի մասնակիցներից մեկը: Կարևոր է նշել, որ որոշ

նախագծեր ուղղված էին ոչ միայն աղջիկներին, այլ ներառում էին նաև տղաներին, և իրականում տղաները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել մասնակցելու և սովորելու հավասարության, իրավունքների և զրոխտրականության վերաբերյալ: «Իմ մարմինը քո թիրախը չէ» նախագծում մասնակցում էին և՛ աղջիկներ, և՛ տղաներ, ինչը ընդգծում էր գենդերային իրավունքների և խտրականության հարցերի նկատմամբ լայն հետաքրքրությունը: Ավելին, որոշ նախագծեր հիմնված էին նախագծի իրականացնողների նպատակի վրա՝ փոխել ինչ-որ բան հոգեբանական աջակցության կարիք ունեցող խոցելի դեռահասների կյանքում: Համայնքներում որոշ աղջիկներ, ըստ հաղորդումների, ստիպված են լինում ենթարկվել որոշակի կարծրատիպերի և իրավիճակների, որոնք կարող են ինքնասպանության մտքեր և գործողություններ առաջացնել: Սա ևս մեկ պատճառ էր այն նախագծերի իրականացման համար, որոնք անդրադառնում են դեռահասների շատ զգայուն և սովորաբար անտեսանելի խնդիրներին:

Հետկոնֆլիկտային կարիքներ

Որոշ նախագծեր մեկնարկել են ի պատասխան Արցախից մարդկանց տեղահանության՝ ճանաչելով ինտեգրման, հոգեբանական աջակցության և համայնքային ներառման անհրաժեշտությունը: Ծրագրի նախաձեռնողները նկատեցին, որ Արցախից մարդկանց հարկադիր տեղահանությունից անմիջապես հետո նոր ժամանած դպրոցականները դժվարությունների էին բախվում նոր իրականությանը հարմարվելու հարցում: Ինչպես բացատրեց ծրագիրն իրականացնողը. «Նոր ժամանած դպրոցականները դժվարանում էին ինտեգրվել համայնքային կյանքին»: Հետևաբար, առաջացավ նրանց աջակցելու անհրաժեշտությունը՝ մեկուսացումը և տրավման հաղթահարելու հարցում:

Մասնագիտական ձգտումներ

«STEM–ը աղջիկների համար» նախագիծն ուղղված էր կարծրատիպերին մարտահրավեր նետելու և աղջիկների մասնակցությունը գիտության ու տեխնոլոգիայի ոլորտներում խթանելու ցանկությամբ հատկապես այն ոլորտներում, որտեղ նրանք անձամբ ձգտում էին մտնել: Նրանց նախագիծը շեշտը դնում էր կրկնակի մոտիվացիայի վրա՝ կարծրատիպերը կոտրելու և աղջիկների մուտքը գիտության ու տեխնոլոգիայի ոլորտներ խթանելու վրա: Ինչպես նշեց մասնակիցներից մեկը. «Մենք գիտենք, որ Հայաստանում աղջիկները STEM առարկաներից ավելի բարձր արդյունքներ են գրանցում, քան տղաները, բայց կարծրատիպերը դեռևս նրանց հեռու են պահում այդ մասնագիտություններից»:

Նախաձեռնությունների արդյունավետությունը և ազդեցությունը

Իրենց նախագծերն ու նախաձեռնությունները նկարագրելիս դեռահաս աղջիկները նշեցին մի քանի կարևոր գաղափարներ, որոնք ընդգծում էին այդ գործողությունների արդյունավետությունն ու ազդեցությունը: Նրանք նախաձեռնությունների արդյունքները դիտարկել են ոչ միայն որպես նախագծերն իրականացնողների ստացած արդյունքի տեսանկյունից, այլև իրենց նախագծերի շահառուների տեսանկյունից:

(A) Շահառուների ստացած հնարավորությունները

- Տեղեկացվածության ավելացում

Շատերը նշեցին, որ իրենց հասակակիցները նոր տեղեկություններ են սովորել (օրինակ՝ դաշտանի ցիկլերի, մարմնի կերպարի կամ իրավունքների մասին) և ավելի բաց են դարձել զգայուն թեմաների քննարկման հարցում: Ըստ մասնակիցների՝ իրազեկվածության բարձրացմանն ուղղված նախագծերը հասել են իրենց արդյունքներին՝ ունենալով այս հանդիպումներին մասնակցության բարձր պահանջարկ և մասնակիցների կողմից նախագծերի հնարավոր ընդլայնման վերաբերյալ հարցումներ: Շատ մասնակիցներ նշեցին, թե ինչպես են իրենց հասակակիցները նոր տեղեկություններ հայտնաբերել «արգելված» թեմաների վերաբերյալ: «Մենք ունեինք աղջիկներ, որոնք մեր

հանդիպումների ժամանակ առաջին անգամ հասկացան, որ իրենց մարմնի հետ կապված մտահոգությունները մի բան են, որի մասին կարող են խոսել և օգնություն խնդրել», - կիսվեց մի խումբ: Ըստ հաղորդումների՝ նրանք ձեռք են բերել կարևոր նոր տեղեկություններ և գիտելիքներ թիրախային թեմաների շուրջ, ինչը, ըստ էության, հետագայում կարող է հանգեցնել համայնքի մյուս անդամների շրջանում ընդհանուր իրազեկվածության բարձրացմանը:

- Վարքային փոփոխություններ

Նշվել են դպրոցական հոգեբանների հետ ներգրավվածության աճի և նախկինում տաբու համարվող հարցերի (օրինակ՝ հոգեկան առողջություն, սեռական հասունացում) շուրջ բաց զրույցների վկայություններ: Որոշ խմբեր դիմել են նախագծին իրենց դպրոցական հոգեբանների կամ ուսուցիչների առաջարկով, որոնք հետագայում դարձել են նրանց մենթորներն ու աջակիցները նախագծի իրականացման ընթացքում: Փաստորեն, սա թույլ է տվել դեռահաս աղջիկներին զարգացնել նոր հաղորդակցման հմտություններ և դպրոցի ուսուցչական անձնակազմի հետ հարաբերությունների այլ մակարդակ: Ավելին, նախագծերին մասնակցող դպրոցականները նույնպես փոխել են իրենց վերաբերմունքը հոգեբանական աջակցության նկատմամբ՝ շնորհիվ այս նախագծերի:

«Մեր սեմինարներից հետո աղջիկները սկսել են այցելել դպրոցական հոգեբանի մոտ և քննարկումներ ունենալ այնպիսի քննարկումների, որոնք նախկինում երբեք չէին համարձակվել ունենալ»,- նշել է թիմերից մեկը: Նախագծերի շահառուները, ըստ հաղորդումների, ավելի վստահ են դարձել և, օրինակ, վերանայել են իրենց մարմնի կերպարի, արտաքին տեսքի և այլնի վերաբերյալ իրենց ինքնընկալումը: Մյուսները ավելի պատրաստակամ են եղել պաշտպանել իրենց և իրենց հասակակիցների իրավունքները, ինչը կարող է հանգեցնել ավելի հավասար պայմանների և ավելի արդար հասարակության:

- Մասնակցության մանրամասներ

Թեև մասնակցության թվերը տարբեր էին, մասնակիցները հետաքրքրությունն ու ներգրավվածությունը՝ երբեմն տղաների կողմից, համարեցին հաջողություն: Ինչպես նշվեց վերևում, որոշ նախագծերում, որոնք պարտադիր չէ, որ ուղղված լինեին միայն աղջիկներին, տղաները նույնպես հետաքրքրություն ցուցաբերեցին մասնակցելու և, կարծես, շատ ակտիվ, ոգևորված և անհամբեր սպասում էին նախագծի ընդլայնմանը: «Տղաները հարցրին. «Ինչո՞ւ չենք կարող մասնակցել, եթե խոսքը հավասարության մասին է»: Եվ, իհարկե, մենք ասացինք, որ բոլորը ողջունելի են», - պատմեց մասնակիցներից մեկը:

(B) Իրականացնողների ստացած հնարավորությունները

- Հասակակիցների հետ կապ և ցանցեր

Նախագծերը մասնակիցների և իրականացնողների միջև ստեղծել են շարունակական աջակցության ցանցեր: Որոշ դեպքերում մասնակիցները նախագծից հետո պահպանել են կապը՝ փոխադարձ աջակցությունը շարունակելու համար: Իրականացնողներն իրենք ձևավորել են նոր ամուր ցանցեր, քանի որ աղջիկներից շատերը խմբավորվել են կոնկրետ նախագծերի համար և ներկայացնում էին տարբեր համայնքներ: Արդյունքում նրանք ձեռք են բերել ընկերներ և ապագա գործընկերներ տարբեր համայնքներից: Ինչպես նշեց աղջիկներից մեկը. «Մինչ այս նախագիծը մենք միմյանց չէինք ճանաչում: Հիմա մենք կապված ենք ողջ կյանքի ընթացքում»: Հետևաբար, նրանք նախևառաջ ձեռք են բերել նոր ընկերներ և գործընկերներ ապագա նախագծերի համար: Մյուս կողմից, հասակակիցների համար նախագծեր իրականացնելիս նրանք ապահովել են իրենց հասակակիցների միջև ընդլայնված ցանց:



- Շոշափելի արդյունքներ

Որոշ խմբեր ստեղծել են կրթական հարթակներ, պաստառներ, գրքույկներ կամ կազմակերպել ցուցահանդեսներ և բանավեճեր՝ իրենց աշխատանքը տեսանելի և տևական դարձնելու համար: Հիմնադրամի ներդրումը նախագծի շոշափելի արդյունքների իրականացման գործում բարձր գնահատվեց և ընդգծվեց: Խմբերից մեկը նշեց, որ «եթե Հիմնադրամի աջակցությունը չստանար, իրենց գաղափարները կմնային թղթի վրա և երբեք չէին իրականացվի»:

Իրականացման հետ կապված մարտահրավերներ

Նախագծերի բոլոր դրական արդյունքների և ազդեցությունների հետ մեկտեղ մասնակից խմբերից յուրաքանչյուրը նշեց, որ նախագծի իրականացման ընթացքում բախվել է տարբեր դժվարությունների: Դժվարությունների մեծ մասը ընդհանուր էին բոլոր խմբերի համար, սակայն դրանք կարելի է խմբավորել երկու կատեգորիայի՝

(a) Շահառու խմբերի հետ հաղորդակցվելու մարտահրավերներ

Ծնողական դիմադրություն. Հատկապես պահպանողական համայնքներում, որոշ ծնողներ կասկածի տակ էին դնում ծրագրերի օրինականությունն ու նպատակը: Ծնողների համաձայնությունը ստանալը դժվար էր որոշակի գործունեության համար: «Մենք ստիպված էինք ծնողներին անընդհատ բացատրել, թե ինչու է նախագիծը կարևոր», - ասաց մասնակիցներից մեկը: Այսպիսով, թիմերի մեծ մասը զգալի ջանքեր է գործադրել նախագծի կարևորությունը ապացուցելու, դրա ներուժը ցուցադրելու և այլնի համար, որպեսզի ծնողները թույլ տան իրենց դուստրերին մասնակցել:

Ժամանակային սահմանափակումներ. Սեղմ վերջնաժամկետները և նախագծերի կարճ տևողությունը սահմանափակում էին նախատեսված արդյունքների շրջանակը և որակը: Այս մարտահրավերը տարածված է փոքր նախագծերի և նախաձեռնությունների համար, բայց այն հաճախ սովորեցնում է նախագիծ

իրականացնողներին, թե ինչպես ավելի նպատակային և թիրախային պլանավորել գործողությունները՝ ապագա նախաձեռնությունների համար:

Հոգեբանական զգայունություն. Դեռահասների հետ հուզական թեմաների շուրջ քննարկումները հեշտացնելու համար անհրաժեշտ էր զգայունություն և հմտություններ, որոնք շատ իրականացնողներ սովորում էին ընթացքում: «Այս տարիքի դեռահասները շատ զգայուն են: Պետք է չափազանց զգույշ լինել պատահաբար նրանց չվնասել», - նշեց մասնակիցներից մեկը: Հաշվի առնելով, որ նախագծերը առաջնորդում էին հենց դեռահասները, որոնք իրենք էլ բախվում էին նույն խնդիրներին, բավական դժվար էր թվում այս առաջադրանքների համար հուզականորեն պատրաստ լինելը:

(b) Վարչարարական կամ ծրագրերի իրականացման փորձի բացակայության մարտահրավերներ

Բյուջեի կառավարում. Մի քանի թիմեր, հատկապես նրանք, որոնք նոր էին դրամաշնորհային ֆինանսավորում ստանում, դժվարանում էին հասկանալ, թե ինչպես արդյունավետորեն բաշխել և ծախսել միջոցները: «Մենք այնքան սովոր էինք ամեն ինչ անել կամավորական հիմունքներով, որ երբ ֆինանսավորում էինք ստացել, չգիտեինք՝ ինչ անել դրա հետ», - կիսվեց թիմերից մեկը:

Նախագծերի մեծ մասն ավարտվել է բյուջեի դրական մնացորդով, քանի որ դեռահասները սովոր էին շատ բաներ անել կամավորական հիմունքներով և նույն ձևով ներգրավել էին շատ օժանդակ անձնակազմ, ինչն էլ հանգեցրել էր բյուջեի չծախսված տողերի:

Սկզբնական ցածր մասնակցություն. Մի քանի թիմեր դժվարանում էին մասնակիցներ ներգրավել, հատկապես, երբ գործ ունեին նեղ կամ կարծրատիպային թեմաների հետ: Աղջիկների նվիրվածության շնորհիվ այս սկզբնական խնդիրը հաղթահարվել է, և բոլոր խմբերը, ի վերջո, հասել են շահառուների անհրաժեշտ թվին: Փաստորեն, այս մարտահրավերը հաջողությամբ հաղթահարվել է, երբ առաջին արդյունքները տեսանելի են դարձել, և դեռահասների նոր խմբեր հետաքրքրություն են հայտնել մասնակցելու: Ավելին, նախորդ տարիների նախագծերից դեռահասներ հետաքրքրվել են նոր հանդիպումների և նախագծերի հնարավորությաբ՝ իմանալով, թե որքան հետաքրքիր էին նախորդները:

Սկզբնական ուղղորդման բացակայություն. Շատերը կշահեին մենթորությունից կամ տեխնիկական ուղղորդումից գործընթացի սկզբում, մասնավորապես՝ բյուջետավորման, գնահատման և նախագծի պլանավորման հարցերում: Այս խնդիրը բարձրաձայնեց մասնակիցների մեծամասնությունը: Սրանցից շատերը

նոր էին նման գործողություններում և չունեին բավարար գիտելիքներ նախագծի կառավարման, իրականացման առանձնահատկությունների և այլնի վերաբերյալ: Նրանք կարծում էին, որ եթե իրենց նախագծերին կցված լինեին ավելի փորձառու մենթորներ, ապա ավելի լավ արդյունքներ կգրանցեին, քան ստացել էին:

Չնայած այս դժվարություններին՝ մասնակիցները մշտապես ցուցաբերել են դիմացկունություն/դիմակայանություն, հարմարվողականություն և սովորելու նկատմամբ նվիրվածություն:

Հետագա մասնակցության հետաքրքրություններ

Բոլոր մասնակից խմբերում կար համայնքային նախաձեռնություններում ներգրավված մնալու և դրանք հետագայում ավելի զարգանալու ոգևորություն՝ թե՛ որպես անհատներ, թե՛ որպես հասակակիցների առաջնորդներ: Ապագա մասնակցության նկատմամբ նրանց հետաքրքրությունները կարելի է խմբավորել 5 հիմնական կատեգորիաների մեջ՝

Ծրագրի շարունակական իրականացում և մասշտաբի ընդլայնում

Շատ դեռահասներ արտահայտեցին իրենց առկա նախագծերը շարունակելու և ընդլայնելու հստակ ցանկություն՝ հետևյալ տարբերակներով.

Ավելի շատ շահառուների հասնելով. Մի քանի խմբեր նշեցին, որ իրենց նախաձեռնությունները դեռևս չեն սպառել իրենց ներուժը, հատկապես գյուղական կամ պահպանողական համայնքներում: «Եթե հնարավորություն լինի, մենք կցանկանայինք շարունակել մեր դպրոցական այցելությունները հատկապես մարզերում, քանի որ այնտեղ հասնելուց հետո տեսանք, թե որքան ավելին է անհրաժեշտ», - ասաց մասնակիցներից մեկը:

Գոյություն ունեցող գործունեության խորացում՝ հիմնվելով նախորդ ցիկլում չներգրավված համայնքներից և դպրոցներից եկող պահանջի վրա: «Մեր նախագիծը դեռևս շարունակվում է, և կան դպրոցականների ավելի շատ խմբեր, որոնք ցանկանում են, որ մենք գանք և ներկայացնենք թեման», - նշեց մեկ այլ դեռահաս:

Ավելի շատ նյութերի ստեղծում և տարածում. Որոշ մասնակիցներ ցանկություն հայտնեցին ավարտելու կամ ընդլայնելու շոշափելի արդյունքները, ինչպիսիք են գրքույկները կամ հարթակները: «Մենք ուզում էինք գիրք հրատարակել, բայց չկարողացանք այն իրականացնել սահմանված ժամկետում, ուստի կցանկանայինք շարունակել և ավարտել այն», - ասաց հոգեկան առողջության աջակցության ոլորտում աշխատող թիմը:

Վերապատրաստումների և կարողությունների զարգացում

Մասնակիցները միաձայն արտահայտեցին ավելի կառուցվածքային ուսուցման հնարավորությունների անհրաժեշտությունը՝ նախագծերի մշակման և ղեկավարման ոլորտում իրենց արդյունավետությունը բարձրացնելու համար:

Նրանց կողմից նշված հիմնական ոլորտներն են՝

- Ֆինանսական գրագիտություն և բյուջեի կառավարում

Շատերի համար դժվար էր դրամաշնորհային միջոցները ճիշտ պլանավորելը, բաշխելը և ծախսելը: «Մենք սովոր ենք անվճար բաներ անել, ուստի երբ գումար ունեինք, չգիտեինք, թե ինչպես այն ռազմավարորեն օգտագործել»,- բացատրեց մի դեռահաս: Մասնակիցները խնդրեցին սեմինարներ անցկացնել բյուջետավորման, ծախսերի հետևման և թերծախսից կամ գերծախսից խուսափելու վերաբերյալ:

- Նախագծի գնահատում և ազդեցության գնահատում

Մի քանի աղջիկներ խոստովանեցին, որ իրենց մոտ բացակայում են գործիքներ՝ իրենց նախաձեռնությունների իրական արդյունքները գնահատելու համար: «Մենք չգիտեինք, թե ինչպես գնահատել մեր նախագծի արդյունավետությունը: Եթե ինչ-որ մեկը մեզ վաղ շրջանում ուղղորդեր, մենք ավելի լավ կանեինք»,- նշեց մի մասնակից:

- Ռազմավարական պլանավորում և իրականացում

Դեռահասները խնդրեցին աջակցություն իրենց նախագծերը ավելի լավ կառուցելու համար, հատկապես կարճ ժամանակացույցերի և բազմափուլ նախաձեռնությունների կառավարման հարցում: «Մենք կցանկանայինք սովորել, թե ինչպես պլանավորել, երբ ունենք կարճ ժամկետ, բայց մեծ նպատակ», - նշեց աղջիկներից մեկը:

- Գլոբալ ֆինանսավորման և երիտասարդների ներգրավման հնարավորությունների վերաբերյալ վերապատրաստում

Շատ մասնակիցներ, հատկապես նրանք, որոնք վաղ փորձ ունեն տեղական դրամահավաքի ոլորտում, արտահայտեցին իրենց ցանկությունը սովորելու, թե ինչպես.

- գտնել երիտասարդության համար հարմար միջազգային դրամաշնորհային հնարավորություններ,
- հասկանալ դիմումի պահանջները, առաջարկների կառուցվածքը և միջազգային դոնորների կողմից օգտագործվող բյուջետավորման մեթոդները, և
- ներկայացնել իրենց տեղական նախաձեռնությունները համաշխարհային մակարդակով:



«Մենք կցանկանայինք սովորել, թե ինչպես դիմել միջազգային դրամաշնորհների կամ մաս կազմել համաշխարհային երիտասարդական շարժումների», - կիսվեցին նրանք: Նրանք խոստովանեցին, որ միջազգային դրամահավաքի աշխարհում կողմնորոշվելը թվում է անհաղթահարելի և անհասանելի առանց աջակցության:

Ներգրավվումը մասնակցային դրամաշնորհներին

Հանդիպմանը մասնակից և ներկայումս նախագծի իրականացումներում ներգրավված դեռահասների շարքում մի քանի աղջիկներ նախորդ ծրագրերի շրջանավարտներ էին, որոնք հնարավորություն են ունեցել ներգրավվելու մասնակցային դրամաշնորհների տրամադրման գործընթացում: Նրանք, ովքեր հնարավորություն ունեին ներգրավվելու, ոգևորություն և հպարտություն էին զգում այդ փորձի կապակցությամբ: Նրանցից մեկը կիսվեց իր փորձով. «Մեզ համար զորացնող էր իմանալ, որ մեր ձայնը կարևոր է ֆինանսավորվող գաղափարների ընտրության հարցում... Ես կցանկանայի դա կրկին անել»: Մյուսները, ովքեր դեռ չէին մասնակցել, արտահայտեցին իրենց հետաքրքրությունը. «Մենք չգիտեինք, որ դեռահասները կարող են օգնել որոշումներ կայացնել: Դա այն է, ինչին ես կցանկանայի մասնակցել ապագայում», - ասաց մեկ այլ մասնակից:

Ցանց և հասակակիցների համագործակցություն

Մի քանի մասնակիցներ ընդգծեցին դեռահասների խմբերի միջև շարունակական հաղորդակցության և փոխանակման կարևորությունը: Մասնակիցները առաջարկեցին պարբերաբար հանդիպումների միջոցով կազմակերպել ցանցային միջոցառումներ՝ փորձի փոխանակման, գործընկերային հարաբերություններ հաստատելու և միմյանց աջակցելու համար: «Մենք կցանկանայինք, որ նման հանդիպումները ավելի հաճախ տեղի ունենային՝ ոչ միայն նախագծերի ավարտին», - ընդգծեց մասնակիցներից մեկը:

Սա դիտվեց որպես լավ հնարավորություն համագործակցելու և համատեղ միջոցառումներ անցկացնելու նմանատիպ թեմաներ և հետաքրքրություններ ունեցող նախագծերի շրջանակներում. «Այս հանդիպումը մեզ հասկացրեց, թե որքան շատ բան կարող ենք անել միասին: Մենք կցանկանայինք ավելի շատ հնարավորություններ ունենալ թիմերի միջև համագործակցելու»:

Ավելին, որոշ մասնակիցներ նշեցին, որ օգտակար կլինի, եթե Հիմնադրամի թիմը շփվի բոլոր խմբի անդամների հետ, այլ ոչ թե միայն խմբի ղեկավարների, որպեսզի բոլորը տեղյակ լինեն գործընթացից և կարողանան իրենց լավագույնս աջակցել:

Միջազգային հնարավորություններ և երիտասարդական ներկայացվածություն

Որոշ դեռահասներ ցանկանում էին ուսումնասիրել Հայաստանից դուրս գտնվող հնարավորությունները, հատկապես միջազգային գործընկերների և կազմակերպությունների հետ կապերի միջոցով: «Մի անգամ մենք հանդիպեցինք տարբեր հիմնադրամներից կանանց, որոնք շրջագայել էին տարբեր երկրներում. ուզում ենք ավելի շատ նմանատիպ հանդիպումներ»:

Նման փոխանակումները դիտվում էին որպես աճի և ուսուցման հնարավորություններ: Շատ աղջիկներ ցանկություն հայտնեցին սովորելու այլ երկրների երիտասարդական շարժումներից և կապ հաստատելու նրանց հետ, հատկապես այն շարժումների, որոնք կենտրոնացած են գենդերային հավասարության, հոգեկան առողջության, կրթության և խաղաղության կառուցման վրա: «Մենք տեսել ենք, որ նմանատիպ խնդիրներ գոյություն ունեն ամենուր՝ բուլինգ, մարմնի դրական կերպար, անհավասարություն: Ուզում ենք իմանալ, թե ինչպես են այլ երկրների աղջիկները հաղթահարում դրանք և ինչպիսի նախագծեր են նրանք իրականացնում»:

Ամփոփում

Կանանց հիմնադրամի կողմից աջակցություն ստացած դեռահասների կողմից իրականացվող նախաձեռնություններն ապացուցել են իրենց արդյունավետությունն ու փոխակերպող բնույթը ոչ միայն անմիջական շահառուների, այլև դեռահաս իրականացնողների համար: Նախագծերն անդրադարձել են համապատասխան և հաճախ անտեսված հարցերի լայն շրջանակի, ինչպիսիք են մարմնի դրական ընկալումը, գենդերային խտրականությունը, հոգեբանական և հոգեկան բարօրությունը, դաշտանային առողջությունը և STEM ոլորտում հավասարությունը: Թեմաների բազմազանությունն արտացոլում է երիտասարդների շրջանում իրենց սերնդի վրա ազդող սոցիալական, հուզական և կառուցվածքային մարտահրավերների վերաբերյալ խորը իրազեկվածությունը:

Այս նախագծերի միջոցով դեռահաս աղջիկները ցուցաբերել են նախաձեռնողականություն, ստեղծագործականություն և առաջնորդություն՝ հաղթահարելով բարդ գործընթացներ, ինչպիսիք են հասակակիցների ներգրավվածությունը, սեմինարների կազմակերպումը, բյուջեի կառավարումը և ջատագովությունը: Կարևոր է, որ քննարկումները ցույց տվեցին, որ նրանցից շատերի համար սա նախագծերի պլանավորման և իրականացման առաջին փորձն էր, ինչը նվաճումներն ավելի նշանակալի դարձրեց: Նրանց հուզական, լոգիստիկ և տեխնիկական մարտահրավերները հաղթահարելու ունակությունն ավելի է ընդգծում երիտասարդներին ռեսուրսներ և պատասխանատվություն վստահելու արժեքը:

Նախագծերը նաև նպաստել են համայնքային կապերի ամրապնդմանը, դեռահասների շրջանում հոգեբանական բարօրության տարածմանը և վնասակար կարծրատիպերի դեմ պայքարին: Մի քանի մասնակիցներ պատմել են, թե ինչպես է իրենց աշխատանքը նոր երկխոսություններ առաջացրել իրենց դպրոցներում և համայնքներում, այդ թվում՝ տղաների և ծնողների ներգրավվածության: Ավելին, նախաձեռնություններն ալիքաձև ազդեցություն են ունեցել՝ առաջացնելով հետաքրքրություն և մասնակցություն այն մասնակիցների մոտ, որոնք ներգրավված չէին նախորդ փուլերում:

Այնուամենայնիվ, քննարկումները նաև բացահայտեցին գիտելիքի, փորձի և աջակցության բացեր, հատկապես բյուջետավորման, գնահատման և նախագծերի կայունության հարցերում: Սրանք այն ոլորտներն են, որտեղ լրացուցիչ մենթորությունը և կառուցվածքային կարողությունների զարգացումը զգալիորեն կբարելավեն դեռահասների կողմից ղեկավարվող աշխատանքի գործընթացը և արդյունքները:

Առաջարկներ

Հիմնվելով ֆոկուս խմբային քննարկման ընթացքում հավաքված պատկերացումների վրա՝ արվում են հետևյալ առաջարկությունները՝ դեռահասների կողմից ղեկավարվող նախաձեռնությունների ապագա պլանավորումն ու աջակցությունը ամրապնդելու համար.

1.Ապահովել շարունակական մենթորություն և տեխնիկական օգնություն

Հնարավորության դեպքում յուրաքանչյուր նախագծի համար ստեղծել կառուցվածքային մենթորության բաղադրիչ՝ դեռահասների խմբերին կցելով փորձառու ֆասիլիտատորների կամ երիտասարդական ակտիվիստների, ովքեր կարող են աջակցել նրանց պլանավորման, բյուջետավորման, իրականացման և գնահատման հարցերում:

Ներառել թեմատիկ բովանդակության (օրինակ՝ հոգեկան առողջություն, ֆեմինիզմ, երիտասարդական պաշտպանություն) վերաբերյալ լրացուցիչ խորհրդատվական աջակցություն համապատասխան մասնագետներից:

2. Առաջարկել թեմատիկ և հմտությունների վրա հիմնված վերապատրաստումներ

Կազմակերպել ֆինանսական գրագիտության, բյուջետավորման, նախագծերի մոնիթորինգի և գնահատման, հրապարակային ելույթների և առաջարկների գրման վերաբերյալ վերապատրաստումներ:

Ներառել մոդուլներ գլոբալ ֆինանսավորման հնարավորությունների և միջազգային երիտասարդական տարածքներում կողմնորոշվելու վերաբերյալ:

3. Աջակցել նախագծի կայունությանը և մասշտաբի ընդլայնմանը

Դիտարկել հետագա փոքր դրամաշնորհներ կամ աջակցության մեխանիզմներ այն խմբերի համար, որոնք ցանկանում են շարունակել կամ ընդլայնել հաջողված նախաձեռնությունները:

Հնարավորություններ տրամադրել փորձառու խմբերին՝ նոր դիմորդներին մենթորություն անելու կամ հասակակիցների միջև վերապատրաստում վարելու համար:

4. Հաղորդակցության և ներառման ամրապնդում

Ապահովել, որ Հիմնադրամի հաղորդակցությունը հասնի խմբի բոլոր անդամներին, այլ ոչ թե միայն թիմի առաջնորդներին՝ թափանցիկությունը, ներգրավվածությունը և համատեղ պատասխանատվությունը խթանելու համար:

Խրախուսել դեռահասների խմբերի միջև հորիզոնական համագործակցությունը՝ նպաստելով միջնախագծային երկխոսությանը, համատեղ հանդիպումներին և ստեղծագործական միջոցառումներին:



5. Մեծացնել ցանցային կապերի և տեսանելիության հնարավորությունները

Կանոնավոր կերպով անցկացնել անձնական և առցանց ցանցային հանդիպումներ բոլոր ներկա և նախկին դեռահասների նախագծեր իրականացնողների համար:

Աջակցել մասնակցությանը տեղական, տարածաշրջանային և միջազգային երիտասարդական և ֆեմինիստական ֆորումներին, որտեղ աղջիկները կարող են կիսվել իրենց փորձով և ներկայացնել Հայաստանի երիտասարդական ոլորտը:

6. Բարելավել մասնակցային գործընթացները

Ընդլայնել մասնակցային դրամաշնորհների հնարավորությունները այն դեռահասների համար, որոնք ցուցաբերել են ուժեղ ներգրավվածություն իրականացման փուլերում:

Առաջարկել ուսուցում և հետագա աջակցություն մասնակցային որոշումների կայացման գործընթացներում ներգրավվածներին՝ իշխանության, հավասարության և հաշվետվողականության վերաբերյալ նրանց ըմբռնումը բարելավելու համար:

7. Հնարավորության դեպքում երկարաձգել իրականացման ժամկետները

Դիտարկել իրականացման համար ավելի ճկուն կամ երկարաձգված ժամկետների հնարավորությունը, մասնավորապես այն նախաձեռնությունների համար, որոնք ներառում են շերտավորված բաղադրիչներ կամ գյուղական վայրերում դաշտային այցելություններ:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱՆԱՆՑ
ՀԻՄՆԱԴՐԱՄ